

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԳԱՐԻԿ ԳԱԳԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

ԺԹ.00.03. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Հասարակական հնչեղություն ունեցող խոշորամասշտաբ փոփոխությունների շարքին է դասվում պատերազմը, որն ամբողջովին խաթարում է ցանկացած հասարակության հոգեբանական ու բարոյական դիմագիծը, պատճառ է դառնում արժեքային համակարգի ճգնաժամի, հոգեկան խռովքի, սթրեսների, ներքին ու արտաքին կոնֆլիկտների, տարաբնույթ սոցիալ, անոմիկ վարքաձևերի և տրամադրությունների առաջացման ու դրսևորման: Հասարակական համակեցության ձևերի և անձի արժեհամակարգի վրա իր հետքն է թողնում ոչ միայն պատերազմական բուն գործողությունների ընթացքն, այլև՝ հետպատերազմյան բարդ ժամանակաշրջանը, երբ հասարակության անդամների շրջանում փոխվում է անձնային արժեքների և գնահատումների համակարգը: Առաջ են գալիս էկզիստենցիալ բնույթի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ո՞վ եմ ես, ի՞նչ կարող եմ անել, ո՞ւմ կարող եմ վստահել, ինչպե՞ս պիտի ապրեմ, ի՞նչ կարող եմ փոխել և այլն, որոնք պահանջում են ոչ միայն անհապաղ, այլև ոչ ավանդական պատասխաններ ու լուծումներ: Քանի որ այդ շրջանին հատուկ է հասարակական նոր իրողությունները ընկալելու, պատերազմի հետևանքները վերապրելու աճող պահանջմունքը և դրան ուղեկցող՝ անձի արժեհամակարգի որոշակի փոխակերպումը, ուստի պատահական չէ, որ հասարակության մեջ անձի և սոցիալական խմբերի սոցիալականացման և կենսագործունեության հետպատերազմական շրջանի ուսումնասիրությունը մեծ կարևորություն է

ներկայացնում հասարակական տարբեր գիտակարգերի համար: Այդ իսկ պատճառով հիմնախնդրի ուսումնասիրման հոգեբանական տեսանկյունն առավելապես ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է ներառել նաև հասարակագիտական և մարդաբանական մի շարք գիտությունների, մասնավորապես, ազգագրության, պատմության, սոցիոլոգիայի, մեթոդաբանությունն ու գիտական խնդիրների լայն շրջանակները: Պատերազմից վերադարձածներին ուղեկցում են հետտրավմատիկ սթրեսային խանգարումները, անհատականության ճգնաժամի և սոցիալական մեկուսացման, սոցիալ-հոգեբանական ապահարմարողականության, նույնականության ճգնաժամի, էթնիկական ինքնության փոփոխությունների հետ կապված խնդիրները:

Ներկայացված ատենախոսության համատեքստում ատենախոսի կողմից նպատակադրվել է ուսումնասիրել պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները, վարքային մոդելները, սոցիալական ինտեգրման ու արժեքային կողմնորոշումները հետպատերազմյան շրջանում՝ իբրև հետազոտության օբյեկտ դիտարկելով զինծառայողների էթնիկական ինքնագիտակցությունը, իսկ առարկա՝ պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները: Նպատակադրվածությունը իրականություն է դարձել վերլուծելով անձի ինքնագիտակցության, էթնիկական ինքնագիտակցության հայեցակարգերն ու մոտեցումները, բացահայտելով պատերազմական և հետպատերազմյան պայմաններում էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկությունները, ուսումնասիրելով զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, վերլուծելով հետպատերազմյան շրջանում զինծառայողների սոցիալ-հոգեբանական վիճակը, հետազոտելով զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հետպատերազմյան շրջանում:

Ատենախոսի կողմից իրականացվել է տեսական հիմնախնդրի ակունքները շոշափող գիտական գրականության վերլուծություն, մեծածավալ հետազոտական աշխատանք, ստացված արդյունքների համահարաբերակցային վերլուծություն, մշակվել են առաջարկություններ՝ ուղղված զինծառայողների սոցիալական

ինտեգրմանն ու հոգեբանական վերականգնմանը: Առաջադրված հետաքրքրական վարկածը հնարավորություն է ընձեռել ատենախոսին վերհանել, լուսաբանել ու իմաստավորել պատերազմի մասնակից զինծառայողների շրջանում առկա մի շարք խնդիրներ, որոնց նորովի իմաստավորումն, արժևորումը և կիրարկումը բնորոշվում են թե տեսական և, թե կիրառական շեշտադրված նշանակությամբ:

Հետազոտությունը իրականացվել է հոգեբանական գիտակարգում հավաստված բավականաչափ հուսալի մեթոդական ապարատով: Դրանք են՝ էթնիկական նույնականության տեսակների ախտորոշման մեթոդիկա (Սոլդատովա Գ.Ու., Ռիժովա Ս.Վ.) «Հանդուրժողականության գործակից» էքսպրես հարցարան (Գ.Ու. Սոլդատովա, Օ.Ա. Կրավցովա, Օ.Ե. Խուխլաև, Լ.Ա. Շայգերովա) [73; էջ 46], էթնոագգային դիրքորոշումների սանդղակ (Օ.Ե. Խուխլաև, Ի.Մ. Կուզնեցով, Ն.Վ. Տկաչենկո) «Վստահություն» մեթոդիկա (Լ.Գ. Պոչեբուտ, Մ.Ի. Կիլոշենկո, Ա.Լ. Սվենցիցկի, Տ.Վ. Կազանցեվա) բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց):

Ատենախոսությունը ներառում է կարևոր նորույթ առ այն, որ բացահայտվել ու վերհանվել են 44-օրյա պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում, դրանց ազդեցությունը վարքային մոդելների, սոցիալական ինտեգրման և արժեքային կողմնորոշումների վրա՝ նորովի դիտարկելով զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության փոփոխությունների սոցիալ-հոգեբանական գործոնները, ինչպիսիք են էթնիկական նույնականության զգացումը, սոցիալական համատեքստում սեփական դերի վերագնահատումը, հայրենասիրական զգացմունքների ուժեղացումը և թշնամու ընկալման փոփոխությունը: Կատարվել է հետազոտություն և արդյունքում բացահատվել՝ հետճգնաժամային հասարակության համատեքստում էթնիկական արժեքների և իդեալների վերաիմաստավորման գործընթացը, էթնիկական խմբերի միջև հարաբերությունների փոփոխությունների շարժընթացը: Անշուշտ, հետազոտության ընթացքում և ավարտին վերհանված ու իմաստավորված արդյունքները էական ներդրում են պատերազմին մասնակցած զինծառայողների հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելու համատեքստում: Հատկապես հաշվի առնելով այն կարևորագույն հանգամանքը, որ հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են գործնական

առաջարկություններ՝ ուղղված զինծառայողների սոցիալական վարքի և ինտեգրման բարելավմանը, հետպատերազմյան շրջանում նրանց էթնիկական ինքնագիտակցության ամրապնդմանը:

Գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը, այնուամենայնիվ կցանկանայինք նշել որոշ խնդրահարույց հարցեր՝ ակնկալելով ատենախոսի մեկնաբանությունները.

Եվ այսպես՝

1. Ատենախոսության մեջ բավականաչափ տեղ է հատկացվում մեթոդներին, որոնց կիրառմամբ իրականացվել են հետազոտությունները, դասագրքային մանրամասն նկարագրությունները, կիրառման մեթոդաբանությունը և այլն /էջ 81-90/: Ցանկալի կլիներ, որ առավելապես շեշտադրվեին հետազոտության արդյունքների վերլուծությունները և հոգեբանական մեկնաբանությունները:

2. Ատենախոսի կողմից ներկայացված են դրույթներ առ այն, որ, պատերազմի մասնակից զինծառայողների մոտ էթնիկական ինքնագիտակցությունը հետպատերազմյան շրջանում **կարող է** դրսևորվել ազգային ինքնության և պատկանելության զգացման ուժեղացմամբ, ինչպես նաև հաջորդիվ դրույթները ներկայացնելիս շեշտադրվում է «**կարող են**» հնարավոր-պայմանական եզրույթը, ինչը, բնականաբար տարակուսանքի տեղիք է տալիս հետազոտության վերջնական եզրակացությունների հիմնավորվածության առումով: Կխնդրեինք ատենախոսին առավել պարզորոշ ներկայացնել դրույթների հիմնավորվածությունը պայմանականությամբ ներկայացնելու պատճառները՝ կրկին անդրադարձ կատարելով հետազոտության արդյունքներին:

3. Հիմնավոր ներկայացման անհրաժեշտություն կա այն, թե կոնկրետ ինչ մեթոդներով է հետազոտվել սոցիալական աջակցության մակարդակը, հասարակության դիրքորոշումներն ու վերաբերմունքը, հետպատերազմյան սոցիալական պայմանների առանձնահատկությունները և վերջիններիս պայմանավորվածությունը էթնիկական ինքնագիտակցության փոփոխությունների ու դրսևորումների վրա, երբ առաջադրվել է համապատասխան բովանդակությամբ հինգերորդ դրույթը:

4. Ատենախոսը կիրառել է էթնոագգային դիրքորոշումների սանդղակ՝ նպատակ հետապնդելով բացահայտել ագգայնական դիրքորոշումները ըստ հայրենասիրական, չեզոք, բացասական տարանջատումների: Կցանկանայինք, որ ատենախոսը մանրամասնորեն ներկայացնել կիրառության արդյունքները և պատկերը ըստ փորձարարական ու վերստուգիչ խմբերի:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն աշխատանք է:

Կատարված դիտողությունները բոլորովին չեն արժեզրկում նրա գիտական արժեքը, քանզի հետազոտվող հիմնախնդիրը բավական բարդ է և գիտական առումով ունի բազմաթիվ չուսումնասիրված, կնճռոտ կողմեր:

Գարիկ Գագիկի Հովակիմյանի «Պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմական շրջանում» թեմայով ատենախոսությունն իր կառուցվածքով, բովանդակությամբ համապատասխանում է ԲՈՀ-ի կանոնակարգի 7-րդ կետին՝ ԺԹ.00.03. թվանիշով՝ «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Այն իր գիտականությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող բոլոր պահանջներին:

Հեղինակը՝ Գարիկ Գագիկի Հովակիմյանը, իր կատարած հետազոտական աշխատանքով գնահատվում է որպես հասուն երիտասարդ գիտնական և արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ն. Հակոբյան

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ն. Հակոբյանի ստորագրությունը հաստատում են

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտքարտուղար՝

Մ. Սարգսյան

8 հոկտեմբերի, 2025թ.

